խաչերն են եւ իր խորամանկութիւնը: Ես այդ մարդից սարսափո՛ւմ եմ, սիրելի Տարոն...»:

Լ. ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿԸ

Դեռ արեւը չէր մտել, դեռ բաւական լոյս կար, երբ մօտեցանք Տաւրոսի ստորոտներին, որ առանձին անունով կոչւում է Սիմ լեառ: Հեռուից, համանուն դաշտավայրի հարաւային կողմում, երեւում էր Մուշ քաղաքը: Նա կանգնած էր բաւական բարձր, լայնանիստ բլուրի վրայ եւ թախծալի կերպով նայում էր դէպի իր առջեւը տարածուած ընդարձակ դաշտավայրը: Նրա թախծութեանը փոքր ի շատէ ուրախ կերպարանք էին տալիս խաղողի այգիները, որոնք, տների հետ միախառնուած, բլուրի բարձրութիւնից իջնում էին մինչեւ ստորոտը: Դէպի ամէն կողմ տիրում էր երեկոյեան լռութիւնը, գործադուլի եւ հանգստի լռութիւնը: Լսւում էր միայն աղմկալի գետակի ձայնը, որ, քաղաքի առջեւից ոլորոելով, փրփրալով գնում էր ու խառնւում Մեղրի գետին: Լսւում էր եւ ջրաղացների խուլ դղրդիւնը, որոնք երկար շարքով բանում էին այդ գետակի վրայ:

Գեղեցի՜կ էր տեսարանը: Գեղասէր Տաւրոսը, մօտենալով Մուշի դաշտավայրին, կարծես վախեցել էր չխանգարել նրա չքնաղութիւնը եւ, զգուշութեամբ դէպի ետ քաշոելով, գոգաւորոել էր, թողնելով այն լայնանիստ բլուրը միայն, քաղաքի շինուածքի համար: Այդ բլուրի դէպի վերը նայելիս, երեւում էր քաղաքը իր մզկիթներով ու եկեղեցիներով: Բոլորովին գագաթի վրայ կանգնած էր հին, կիսաւէր ամրոցը: Բլուրի ստորոտից, հարթ տարածութեան վրայ, անմիջապէս սկսում էին ծխախոտի մշակութեան ընդարձակ արտօրայքը, որոնք քաղաքացիների գլխաւոր հարստութիւնն էին կազմում:

Չգիտեմ ինչո՞ւ ես տխուր էի այդ քաղաքին մօտենալու ժամանակ: Արդեօք նրա համար, որ Տարօնի մարդաշատ, մեծահարուստ քաղաքներից մնացել էր այդ մէկը միայն, եւ այն եւս աւելի մի մեծ աւանի տպաւորութիւն էր գործում, քան թէ քաղաքի: Չկար Կաւ-կաւ կոչոած ամրաշէն քաղաքը, իր անառիկ Ողական բերդով: Չկար Ձիւնակերտ քաղաքը, որ Վախթանգ զօրավարը նորոգելով, իր կնոջ անունով կոչեց Պորպէս: Չկար Օձ քաղաքը, որի ահարկու բերդը շինեց Աշոտ Մսակերի որդի Դաւիթ Բագրատունին: Չկար Վիշապ քաղաքը, որ Վաղարշակի օրերում հիմնեցին հնդկացի գաղթականները, որը այլ անունով կոչւում էր Տիրակատար քաղաք: Չկար եւ Մծուրք քաղաքը, որ հիմնեց Սանատրուկ արքան: Բոլորը՜ կորաւ, բոլորը՜ անհետացաւ, մնաց որբացած Մուշը միայն, որ այժմ մռայլ դէմքով նայում էր